

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը եւ Գերմանիայի  
Դաշնային Հանրապետության պաշտպանության դաշնային նախարարությունը, այսուհետ՝  
Կողմեր,

դիտարկելով միջազգային ռազմական համագործակցությունը որպես Եվրատլանտյան  
տարածաշրջանի անվտանգության եւ կայունության կարեւոր տարր,

աջակցելով եւ ակտիվորեն մասնակցելով Հյուսիսատլանտյան դաշինքի  
կազմակերպության (ՆԱՏՕ) նախաձեռնած "Գործընկերություն հանուն խաղաղության"  
ծրագրին, ընդունելով ՆԱՏՕ-ի դերը միջազգային խաղաղության եւ անվտանգության  
պահպանման գործում,

ցանկանալով սերտ համագործակցության միջոցով ավելի խորացնել իրենց զինված  
ուժերի միջեւ հարաբերությունները,

համաձայնեցին հետեւյալի մասին.

### ՀՈՂՎԱԾ 1 Նպատակը

Սույն Համաձայնագիրը սահմանում է փորձի եւ գիտելիքների փոխանակման եւ  
ռազմական համագործակցության այլ ձեւերի շրջանակը՝ ի նպաստ Կողմերի զինված  
ուժերի:

### ՀՈՂՎԱԾ 2 Համագործակցության ոլորտները

1) Կողմերի միջեւ համագործակցությունը կներառի տեղեկատվության եւ փորձի  
կանոնավոր փոխանակումը հետեւյալ ոլորտներում.

1. "Գործընկերություն հանուն խաղաղության" (ԳՀԽ) ծրագիր,
  2. անվտանգություն եւ ռազմական քաղաքականություն,
  3. ազատ, ժողովրդավարական հասարակությունում զինված ուժերի ինտեգրում,
  4. ղեկավարման հայեցակարգ (Innere Führung),
  5. զինված ուժերին առնչվող սահմանադրական դրույթներ եւ ռազմական իրավունք,
  6. զինված ուժերի ներքին կանոնակարգ,
  7. սպառազինությունների վերահսկման ռազմական ասպեկտներ,
  8. անձնակազմի ընտրություն եւ ղեկավարում,
  9. զինվորական եւ քաղաքացիական ծառայողների հիմնական ուսուցում եւ  
շարունակական վերապատրաստում,
  10. պաշտպանական վարչարարություն եւ սոցիալական հարցեր,
  11. զինված ուժերի կազմակերպչական կառույցներ,
  12. զինված ուժերի պլանավորման ընթացակարգեր,
  13. զինված ուժերի կազմակերպումը խաղաղ պայմաններում,
  14. ռազմական բժշկություն,
  15. ռազմական պատմություն,
  16. ռազմական աշխարհագրություն,
  17. շրջակա միջավայրի պաշտպանությունը զինված ուժերում,
  18. զինված ուժերի մասնակցությունը աղետների հետեւանքների վերացման եւ  
մարդասիրական օգնության գործողություններին,
  19. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներ:
- 2) Կողմերը համաձայնում են դյուրացնել լրացուցիչ ռազմական շփումները եւ  
աջակցել դրանց՝ առաջին հերթին պահեստագորային միջոցառումների, ռազմական

երաժշտության եւ սպորտի բնագավառներում:

### ՀՈԴՎԱԾ 3 Համագործակցության ձեւերը

- 1) Կողմերի միջեւ համագործակցությունը կիրականացվի հիմնականում հետեւյալ ձեւերով.
  1. պաշտպանության նախարարությունների՝ բարձր մակարդակի, ղեկավար զինվորական եւ քաղաքացիական ներկայացուցիչների պաշտոնական այցեր,
  2. անձնակազմի եւ փորձագետների հանդիպումներ,
  3. պատվիրակությունների՝ տեղեկատվական բնույթի եւ աշխատանքային այցելություններ,
  4. շփումներ հավասարազոր ռազմական հաստատությունների միջեւ,
  5. շփումներ Միավորված ազգերի կազմակերպության՝ խաղաղության աջակցման առաքելությունների համար նախատեսված ստորաբաժանումների միջեւ,
  6. մասնակցություն ուսումնական դասընթացների, վերապատրաստման ծրագրերի, սեմինարների, բանակցությունների եւ գիտաժողովների,
  7. ուսումնական այցեր զինվորական ստորաբաժանումներ եւ քաղաքացիական հաստատություններ,
  8. ռազմական գիտությունների վերաբերյալ տեղեկատվության եւ նյութերի փոխանակում,
  9. մշակութային եւ սպորտային միջոցառումներ:
- Կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ եւ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, կարող են համագործակցել նաեւ այլ ձեւերով:
- 10) Ռազմական նյութերի եւ տեխնոլոգիաների փոխանակումը սույն Համաձայնագրով չի կարգավորվում:

### ՀՈԴՎԱԾ 4 Իրականացման պայմաններ

- 1) Համագործակցությունը կիրականացվի առանձին ծրագրերի հիման վրա, որոնք համատեղ կհաստատվեն յուրաքանչյուր հաջորդ տարվա համար: Այս ծրագրերը կհանդիսանան սույն Համաձայնագրի լրացուցիչ փաստաթղթեր:  
Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են ցանկացած ժամանակ փոփոխություն կատարել համաձայնեցված տարեկան ծրագրերում:
- 2) Պաշտոնական այցերը կկազմակերպվեն եւ կհամակարգվեն առանձին: Դրանք կիրականացվեն հաջորդաբար եւ փոխադարձ համաձայնությամբ: Նույնը կկիրառվի նաեւ Կողմերի փաստափոխադարձ եւ աշխատանքային այցերի շրջանակներում պատվիրակությունների եւ առանձին անձանց փոխադարձ այցելությունների համար:
- 3) Ինչ վերաբերում է համագործակցության այլ ձեւերին, մասնավորապես՝ զինված ուժերի կամ պաշտպանական վարչակազմի ուսումնական հաստատություններում ուսանողների հիմնական ուսուցում եւ շարունակական վերապատրաստում իրականացնելուն, ապա համապատասխան այլ կանոններ կարող են սահմանվել առանձին լրացուցիչ համաձայնագրերով:
- 4) Այդպիսի համագործակցության շրջանակներում համակարգված միջոցառումները կիրականացվեն՝ հաշվի առնելով համապատասխան ընդունող երկրի գործող օրենքները եւ այլ կանոնները:
- 5) Ըստ պահանջի՝ սույն Համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրություններ կարող են կնքվել համագործակցության առանձին ոլորտների համար:

### ՀՈԴՎԱԾ 5 Անվտանգություն

Կողմերը երաշխավորում են երկկողմ համագործակցության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության եւ տվյալների գաղտնիությունը:

Կողմերը պարտավորվում են այդ տեղեկատվությունը եւ տվյալները չօգտագործել ի վնաս մյուս Կողմի շահերի:

**ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 6**  
**Ծախսեր**

1) Յուրաքանչյուր Կողմ ինքն է հոգում իր ծախսերը, եթե 4-րդ հոդվածում նշված տարեկան ծրագրերի առնչությամբ կամ հետագա համաձայնագրերում այլ բան նախատեսված չէ:

2) Մյուս Կողմին մատուցված եւ սույն Համաձայնագրի պայմանների կատարման համատեքստում իրականացված անհրաժեշտ ծառայությունների համար կփոխհատուցի ծառայությունների համար դիմած Կողմը՝ համապատասխան ազգային բյուջետային կանոնների համաձայն:

**ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 7**  
**Վեճերը**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ կլուծվի միայն Կողմերի միջեւ՝ երկկողմ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

**ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 8**

**Ուժի մեջ մտնելը, տեւողությունը, փոփոխությունները, դադարեցումը**

1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության պաշտպանության դաշնային նախարարությանը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ սահմանադրական պահանջները կատարելու մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու օրվանից: Ուժի մեջ մտնելու օր է համարվում ծանուցումը ստանալու օրը:

2) Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր անգամ մեկ տարով, եթե չդադարեցվի Կողմերից որեւէ մեկի կողմից՝ վեց ամիս առաջ գրավոր ծանուցելու միջոցով:

3) Սույն Համաձայնագիրը կարող է ցանկացած ժամանակ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր փոփոխվել կամ լրացվել:

Կատարված է Երեւան քաղաքում՝ 2007թ. մայիսի 15-ին, եւ Բոնն քաղաքում՝ 2007թ. հունիսի 8-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, գերմաներեն եւ անգլերեն. ընդ որում՝ բոլոր երեք տեքստերն էլ հավասարազոր են: Հայերեն եւ գերմաներեն տեքստերի տարբեր մեկնաբանությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թ. հոկտեմբերի 31-ից:

**AGREEMENT**

Between the Ministry of Defence of the Republic of Armenia and the  
Federal Ministry of Defence of the Federal Republic of Germany  
concerning Cooperation in the Military Field

The Ministry of Defence of the Republic of Armenia and the Federal  
Ministry of Defence of the Federal Republic of Germany, hereinafter  
referred to as the Parties,

regarding international defence Co-operation as an important element of  
security and stability in the Euro-Atlantic area,

in support of the North Atlantic Treaty Organisation (NATO) launched Partnership for Peace and actively participating in it, acknowledging the role of the NATO in ensuring international peace and security, desirous to intensify relations between their armed forces through closer cooperation,

have agreed as follows:

#### Article 1 Purpose

This Agreement lays down the framework for the exchange of experiences and findings and for other forms of military cooperation to the benefit of the armed forces of the Parties.

#### Article 2 Areas of Cooperation

(1) The cooperation between the Parties shall comprise of the regular exchange of information and experience in the following areas:

1. Partnership for Peace (PfP),
2. Security and military policy,
3. Integration of the armed forces into a free, democratic society,
4. Leadership conception (Innere Führung),
5. Constitutional provisions relative to the armed forces, and military law,
6. Internal order of the armed forces,
7. Military aspects of arms control,
8. Personnel selection and management,
9. Basic training and continuation training of military and civilian personnel,
10. Defence administration and social affairs,
11. Organisational structures of the armed forces,
12. Force planning procedures,
13. Running the armed forces in peacetime,
14. Military medicine,
15. Military history,
16. Military geography,
17. Environmental protection in the armed forces,
18. Deployment of the armed forces in disaster relief and humanitarian assistance operations,
19. Other areas upon mutual coordination.

(2) The Parties agree to facilitate and promote additional military contacts, above all in the areas of reservist activities, military music and sports.

#### Article 3 Forms of Cooperation

(1) Cooperation between the Parties shall be carried out chiefly in the following forms:

1. Official visits by high-level, leading military and civilian representatives of the Ministries of Defence,
2. Staff and expert talks,
3. Informative and working visits of delegations,

4. Contacts between comparable military institutions,
5. Contacts between units earmarked for peace support missions of the United Nations,
6. Participation in training courses, internships, seminars, colloquia and symposia,
7. Study trips to military units and civilian institutions,
8. Exchange of information and material on military studies,
9. Cultural and sports events.

The Parties may cooperate in other forms upon mutual agreement and according to their national legislation.

(2) The exchange of defence materiel and technologies is not covered by this Agreement.

#### Article 4 Implementing Provisions

(1) The cooperation shall be implemented on the basis of separate programmes, which will be jointly laid down for each following year. These programmes shall be supplementary to this Agreement. The Parties may change the agreed-upon annual programmes by mutual agreement at any time.

(2) Official visits shall be arranged and coordinated separately. They shall be carried out alternately and by mutual agreement. The same shall apply to the exchange of delegations and individuals by the Parties in the context of fact-finding and working visits.

(3) As far as other forms of cooperation are implemented, in particular the basic and continuation training of students in training facilities of the armed forces or the defence administration, appropriate, differing regulations may be laid down separately in additional agreements.

(4) The measures coordinated in the context of such cooperation shall be implemented taking into consideration the laws and other regulations valid in the respective host country.

(5) As required, supplementary protocols to this Agreement may be concluded for individual areas of cooperation.

#### Article 5 Security

The Parties guarantee the confidentiality of information and findings obtained in the course of bilateral contacts. The Parties undertake not to use such information and findings to the detriment of the interests of the other Party.

#### Article 6 Costs

(1) Each Party shall bear its own costs, unless otherwise specified in Article 4 concerning annual programmes or in further agreements.

(2) The necessary services rendered to the other Party and performed in the context of implementing the stipulations of this Agreement shall be reimbursed by the Party requesting the service in accordance with the appropriate national budgeting regulations.

#### Article 7 Disputes

Any dispute regarding the interpretation or application of this Agreement shall be resolved by bilateral consultation and negotiation between the Parties solely.

#### Article 8

##### Entry into Force, Duration, Amendments, Termination

(1) This Agreement shall enter into force on the date on which the Ministry of Defence of the Republic of Armenia has notified in writing through diplomatic channels the Federal Ministry of Defence of the Federal Republic of Germany of its compliance with the constitutional requirements necessary for the entry into force of this Agreement. The relevant date shall be the day on which the notification is received.

(2) This Agreement is concluded for the duration of five years. It shall automatically be extended to another year unless it is terminated in writing by one of the Parties giving six months notice.

(3) This Agreement may be amended or supplemented in writing at any time as mutually agreed by the Parties.

Done at Yerevan on 15 May 2007, and at Bonn on 08 June 2007 in duplicate, each in the Armenian, German and English languages, all three texts being authentic. In case of divergent interpretations of the Armenian and German texts, the English text shall prevail.

Agreement has entered into force on 31.10.2007.